


Գ. ԳԱՅՐԱՊԵՏՅԱՆ



ՆԱԴԱՍԱԿԻ ՅԵՎ
ԱՂԿԵՍԻ ԴԵՔՅԱՌԸ

ՊԵՏԿՐԱՏ

891.995

Հ-30

Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

891.995

30 աջ.

ՆԱՊԱՏԱԿԻ ՅԵՎ ԱՂՎԵՍԻ ՀԵՔՅԱԹԸ

Նկարներ՝ Ն. Զափնյանի

ՊԵՏՇՐԱՏ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1938




3705
38

I

Զմուռն մի որ անտառում
Ծեր աղվեսն եր թափառում:
Որը ցուրտ եր և ամպոտ,
Սառել էյին ձեռ ու վոտ:
Մին ել՝ ըհ՛ը, բացատում
Մի սիրունիկ փոքրիկ տուն:
Ծխնելուղից աղյուսե
Ծուխ եր յեղնում մութ ու սեւ,
Նապաստակն ել պղզած,
Պատուհանին պպզած,
Քաղցր գազար եր կրծում,
Փպտում, աչքը կկոցում:

II

Աղվեսն ուզում եր վաղուց
Պատսպարվել ցուրտ քամուց
Ուզեց մի կերպ ներս գնա
Այն տնակում տաքանա,
Վոր իրեն մի տեղ անի—
Սոված փորին զեղ անի:
Զյունի վրա պպզեց,
Ճարտար լեզվին զոռ տվեց.
— Վայ, այս փոքրիկ բացատում
Մի այսպիսի սիրուն տուն.



Կարմիր տանիք, ճերմակ պատ,
 Լուսամուտը փոսկեպատ:
 Ի՞նչ իշխան ե, ի՞նչ խաթուն
 Խնակվում այս պալատում.
 Ուրախացած այս գովբից
 Շլզիկն ասաց վերևից.
 — Իմն ե, իմն ե այս տունը,
 Յես եմ այս տան խաթունը:
 — Այ նապաստակ բախտավոր,
 Տունդ լինի շնորհավոր:
 Շատ տխուր ե մեր գյուղում
 Յե՛վ մանավանդ մեր թաղում:
 Մեկը չկա, վոր նստես,
 Հետը մի քիչ գրուցես:
 Իսկի չկա այսպես տուն,
 Վոչ ել քեզ պես մի խաթուն:
 Հյուր չե՞ս, ուզում, բարեկամ,
 Կթողնե՞ս, վոր յես ներս գամ:
 — Ներս համեցիր, այ աղվես,
 Գլխիս վրա տեղ ունես:
 Հյուրի համար պատվական
 Իմ տնակում միշտ տեղ կա:
 Նապաստակը ի՞նչպե՛ս ցած,
 Բացեց տնակը կողպած:
 Աղվեսն իրեն թոփ արավ,
 Մահճակալին հոպ արավ,
 Պառկեց, պոչովը ծածկվեց,
 Աչքը փակեց ու քնեց:

III

«Այ քեզ աղվես, բարեկամ,
 Այս տեսակ ել անդգամ»: —

Մտածեց մեր շղթիկը,
Կասկած ընկավ սրտիկը:
Իսկ աղվեսը աղի պես
Կոպիտ, տգետ աներես,
Քնում եր տաք անկողնում,
Հետո յեխում, գոգոռում:

— Դաշտի շրջիկ,

Անպոչ շղթիկ,

Վառարանը չե՞ս վառել,
Կերակուրը չե՞ս յեփել...
Այս ի՞նչ բան ե. յերեկ եյ
Բարձս չեյիր թափ տվել...
Վոնց ես՝ հիմի վեր կենամ
Սյ դանդալոշ գլխիդ տամ:
Բա չգիտե՞ս, այ անտեր—
Դու ծառա յես, իսկ յես՝ տեր:
— Ի՞նչ ես յեկել, անիրավ,
Գլխիս դարձել պատիժ, ցավ:
Ի՞նչ ես ասում, այ անտուն—
Աղան յես եմ, ծառան՝ դու:
Հյուր ես յեկել մի որով,
Վոչ թե ամսով ու տարով:

— Ձայնդ, շղթիկ,

Դաշտի շրջիկ:

Սրան մտիկ, սրան տես,
Ուզում ես դճւրս անեմ քեզ...

IV

Այսպես՝ աղվես, նապաստակ,
Այդ միևնույն հարկի տակ
Քանի ամիս միասին
Շան, կատվի պես ապրեցին—

Նապաստակը՝ տան ծառա,
Իսկ աղվեսը՝ վոնց աղա:

Նապաստակը աշխատում,
Ջուր եր բերում, կաթ կթում,
Կաթ եր կթում, տաքացնում,
Սերը քաշում, հավաքում:


Վերջը հարեց խնոցի,
Ստացավ մի աման լի
՝ Իեղին կարագ՝

Վոնց ճրագ:

Կարագով լի ամանը
Տարավ, դրեց մառանը,
Վոր ձու ճարի և ալյուր,
Գազաններին կանչի հյուր,
Անի հալվա ու գաթա,
Յեվ հյուրերին պատիվ տա:
Բայց աղվեսը խորամանկ
Կարագն առավ աչքի տակ.
Վճռեց՝ մտնի մառանը
Ու դատարկի ամանը:

V

Մի գիշեր ել աղվեսը,
Մեր շղթիկի տան մեծը,
Նապաստակին ձայն տվեց,
Թե.— Ինձ լսիր, մատաղ քեզ:
Քույրիկ ունեմ մինուճար,
Բայց հիվանդ ե ու անճար:
Մարդ ե զրկել, ինձ ասի.
«Անգին ախպեր, յեկ, հասի՛ր,
Մահս մոտ ե, մահս մոտ,
Սիրտս այբված ու վշտոտ»:
Թե քույրիկս մահանա,



Այդ ցավին չեմ դիմանա...
Վա՛յ, քույրիկ ջան, յես մեռնեմ,
Քեզ դազադում չտեսնեմ...

Մղկտում եր աղվեսը,

Թաթով ծածկում լերեսը:

Նապաստակը խիստ հուզված,
Դարձավ նրան ու ասաց.

— Մի մղկտա, այ աղվես,

Ի՞նչ ես լալիս, ջարդում քեզ:

Թե ոգնել ե հարկավոր,

Թեկուզ գնա ամեն որ:

— Հա՛, ընկեր ջան, մատաղ քեզ,

Դե, վեր կենամ, գնամ յես:

Աղվեսն իրեն թոփ արավ,

Մին հատակին հույ արավ,

Մին ել հասավ մառանը,

Դիպավ դրսի դռանը,

Նիգով հանեց թխթխկոց,

Բանալիով չխչխկոց,

Դուռը բարձր ճռճուաց՝

Աղվեսն իբրեւ թե գնաց:

Թագուն մտավ մառանը,

Գտավ յուղի ամանը,

Վողջ կարագը խփշաց,


Գետնին պառկեց ու քնեց:

VI

Լուսաբացին աղվեսը,
Նապաստակի տան մեծը,
Նիգով հանեց թխթխկոց,
Բանալիով չխչխկոց,
Ճռճուացրեց դռնակը,

Յեկավ, մտավ սենյակը:
 — Հը՞, ինչպե՞ս ե քույրիկդ,
 Ուրախացա՞մ սրտիկդ:
 — Ուրախ լինես մշտական,
 Այ սրտակից բարեկամ:
 Քույրս առողջ ե հիմի,
 Ել վոչ մի ցավ նա չունի:
 Շատ աղաչեց ու խնդրեց,
 Վոր շատ բարե անեմ քեզ:
 — Շնորհակալ եմ, այ աղվես,
 Տեսնեմ՝ դու չպառավես:
 Այսօր տանը դու տիտիկ,
 Գնամ գյուղն այն մոտիկ,
 Վոր ձու ճարեմ և ալյուր,
 Գազաններին կանչեմ հյուր:
 — Այ, ապրի իմ շղիկը,
 Բարի յե քո սրտիկը:
 Քեզ պես մի մարդ հյուրասեր
 Վոչ տեսել եմ վոչ լսել:
 Նապաստակը յեղավ վեր,
 Հագավ ձմռան տաք շորեր,
 Գնաց, մտավ մառանը,
 Տեսավ դատարկ ամանը,
 Գլխին տվեց ու վոտին,
 Բայց ի՞նչ աներ իր հերթին.
 Կրկին աղմուկ, աղաղակ,
 Կրկին աղվե՞ս խորամանկ,
 Անպոչ շղիկ,
 Դաշտի շը՛լիկ...
 Այդ բոլորի ոգուտն ի՞նչ.
 Դուրս չեր գալիս իր տնից:

Գնում եր մեր շղիկը,
 Շատ տխուր եր սրտիկը,
 Վորտե՞ղ գնար, ում դիմեր,
 Վոր աղվեսին դուրս աներ.
 Գայլի՞ն, յեզան, քուչիկի՞ն...
 Ձե, իր հսկա պապիկին:
 Իր պապիկին վոր հիշեց,
 Քայլերն արավ լայն ու մեծ.
 Գնաց, գնաց շղիկը,
 Շատ ուրախ եր սրտիկը—
 Գիտեր, վոր լավ ար՞ պապին
 Ձի մերժի իր թոռնիկին:
 Արջի տունը հեռու չեր,
 Վոր մոլորվեր ու կորչեր.
 Հսկա այրում մի տաքուկ
 Մտել եր նա ձմռան քուն:
 Հասավ այրին լայն ու մեծ
 Յեվ պապիկին ձայն տվեց.
 — Պապի, պապի թանկագին,
 Մի լսիր քո թոռնիկին...
 Իսկ պապիկը յերագում.
 «Մեղը, մեղը» եր ասում.
 — Մեղը չունեմ, վոր տամ քեզ,
 Յեկել եմ, վոր ինձ ոգնես.
 Այն սեպ ու մուլթ յերեսը,
 Այն սրտամեռ աղվեսը...
 — Ի՞նչ ես ասում, աղվե՞սը,
 Ասա, թող գա մի դեսը:
 — Ի՞նչ ես ասում, պապի, ինձ,
 Դուրս չի գալիս իմ տնից:
 Դեղին կարագս ե կերել,



Ինձ ծեծել ե, հայհոյել...
 Հուր ե յեկել մի որով,
 Ձի հեռանում ել սիրով:
 Գլխիս աղա յե դարձել,
 Ինձ սար ու ձոր ե գցել:
 Արի, գնանք միասին,
 Մի լավ պատժիր աղվեսին:
 — Ի՞նչ գազան ե այն փուշը,
 Վոր յես թողնեմ իմ վորջը,
 Հանգիստ քունս խանգարեմ,
 Գամ քո տնից դուրս անեմ:
 Այնպես գոռամ այստեղից՝
 Լեզին ճաքի յերկյուղից:
 Արջ պապիկը վոր գոռաց,
 Վողջ անտառը դղրդաց:
 Ձայնը հասավ աղվեսին
 Սիրտն ու լեզին ճաքեցին,
 Պատուհանից թռավ ցած,
 Գլուխն առավ ու գնաց:
 Մին ել տեսան՝ աղվեսը,
 Այն սեվ ու մութ յերեսը
 Ձի յե դարձել հրեղեն,
 Արագ գալիս ե հրեն:
 — Այդ ո՛ւր, աղվես բարեկամ,
 Ո՛վ իմ տեր ու տիրական:
 — Կրկին քույրիկս ե կանչել...
 — Կրկին քույրիկդ ե կանչել:
 Ձե, քույրիկդ չի կանչել.
 Պապիս ձայնն ե քեզ քշել...



Յուրա ձմեռ ե, ցուրտ ձմեռ,
Ճերմակել են դաշտ ու լեռ,
Քամին փչում եր, ճչում:
Ծեր անտառը մռնչում:
Ահա փոքրիկ բացատում
Մի սիրունիկ պստիկ տուն:
Ծխնելույզից աղյուսե
Ծուխ եր լեղնում մութ ու սեփ:
Նապաստակն ել պլգած,
Պատուհանում պպզած,
Քաղցր գազար ե կրծում,
Ժպտում, աչքը կկոցում:
Ունի և՛ կաթ, և՛ կարագ,
Յե՛վ ուրախ ե շարունակ,
Վոր ազատվեց աղվեսից—
Չար աղախի յերեսից...

* * *

Վոր հեքյաթը վերջացավ,
Յերեք խնձոր ընկավ ցած,
Մեկը հեքյաթ հնարողին,
Մեկը նրա գրողին,
Մեկն ել—մեծը բոլորից—
Այն ել... Այն ել... Այն ել ինձ:



Պատ. խմբագիր՝ Մ. Կորյուն
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբազրիչ՝ Թ. Հովակիմյան

Գրավիտի լիազոր՝ Ղ - 3522. Հրատ. 4512

Պատվեր 183. Տիրաժ 4000.

Թուղթ 62×94 Տպագր. 1 մամ.

Մեկ մամ. 1728 նշան.

Հանձնված է արտադրության 17 մարտի 1938 թ.

Ստորագրված է տպագրության համար 4 ասլրիլի 1938 թ.

ԳԻՆԸ 70 Կ.

Պետհրատի 1 տպարան, Յերևան. Լենինի 65

<< Ազգային գրադարան



NL0416885

367

10491

ԳԻՆԸ 70 Կ.

Ա. ԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ՏԿԱԶԿԱ Օ ԼՈՏԻՇԵ Ի ՅԱՅԻՇԵ
ԴԻԶ ԱՐՄ. ՏՏՐ, ԵՐԵՎԱՆ